ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ԵՊՀ պրոռեկտոր

Է. Վ. Ասրիյան

09.07.2025

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Արման Ստեփանի Նալբանդյանի «Սյունիքի ուշմիջնադարյան նյութական մշակույթը (ըստ վերջին տարիների պեղումների արդյունքների)» Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի ատենախոսության մասին:

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հնագիտության և ազգագրության ամբիոնի 2025 թ. հունիսի 26-ի նիստում քննարկվեց Արման Ստեփանի Նալբանդյանի «Սյունիքի ուշմիջնադարյան նյութական մշակույթը (ըստ վերջին տարիների պեղումների արդյունքների)» աշխատանքը՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Նիստին մասնակցում էին Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Հ. Ավետիսյանը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ Մ. Գաբրիելյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Նահապետյանը, պ.գ.թ., դոցենտ Ա. Գնունին, պ.գ.թ., դոցենտ Հ. Հարությունյանը, ամբիոնի դասախոսներ Բ. Գասպարյանը, Հ. Սիմոնյանը:

Ելույթ ունեցան Հ. Ավետիսյանը, Մ. Գաբրիելյանը, Ա. Գնունին, Հ. Սիմոնյանը : Նիստի մասնակիցները արձանագրում են հետևյալը.

Արման Ստեփանի Նալբանդյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Սյունիքի ուշմիջնադարյան նյութական մշակույթին: Ուշ միջնադարի ժամանակաշրջանը լայնորեն լուսաբանված է գրավոր աղբյուրներում և արխիվային փաստաթղթերում: Միևնույն ժամանակ պատմական և մշակութային վերակազմություններն անհնար են առանց հնագիտական աղբյուրների ուսումնասիրության: Այս առումով Սյունիքի տարածաշրջանի ուսումնասիրությունը

առավել հարուստ նյութ կարող է տալ հետագա հետազոտությունների համար, քանի որ խնդրո առարկա ժամանակաշրջանը՝ Սյունիքի առավել ծաղկման շրջանն էր: Թեպետ այս բնագավառում կատարված է բավականաչափ մեծ աշխատանք (Ե. Լալայան, Ս. Լիսիցյան, Ս. Բարխուդարյան, Գ. Գրիգորյան, Մ. Հասրաթյան, Ն. Պապուխյան և այլք), սակայն հնագիտական սկզբնաղբյուրները, մասնավորապես՝ մասայական նյութը մնում էին ստվերված: Այս առումով ներկայացված աշխատանքը խիստ արդիական է, քանի որ մանրամասն ներկայացնում է ոչ միայն հոգևոր և աշխարհիկ հուշարձանների ճարտարապետությունը, կառուցողական առանձնահատկությունները, այլև պեղումներից հայտնաբերված խեցեղենը, մետաղը, ապակին: Աշխատանքն իր բնույթով նորարար է, քանի որ նյութի քննության համար հեղինակը որդեգրել է միջմասնագիտական մեթոդը, լայնորեն օգտագործելով պատմական, վիմագրագիտական աղբյուրները, բնական գիտությունների տվյալները: Աշխատանքում ներկայացված նյութը միանգամայն օրիգինալ է, քանզի ամփոփված են ՀՀ Սյունիքի մարզում հեղինակի բազմամյա հետազոտությունների արդյունքները: Ընդհանուր առմամբ շրջանառության մեջ են դրվում հինգ եկեղեցական համալիրներից, ինչպես նաև Հին Գորիսի մելիքական ապարանքից հայտնաբերված նյութերը:

Ներկայացված աշխատանքը բաղկացած է նախաբանից, չորս գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից (237 անվանում, այդ թվում սկզբնաղբյուրներ, հետազոտություններ, մամուլի հրապարակումներ, համացանցային նյութեր, ատենախոսություններ, դաշտային աշխատանքների հաշվետվություններ, արխիվային նյութեր), 3 հավելվածից (3 քարտեզ, 148 լուսանկար և չափագրություն՝ հավելված 1, Մեղրիի Ս. Հովհաննես վանքից հայտնաբերված քարե գտածոների երկրաբանական հետազոտությունը՝ հավելված 2, նույն վայրից հայտնաբերված հնաբուսաբանական նյութերի հետազոտությունը՝ հավելված 3, Ս. Հովհաննես վանքից հայտնաբերված ձեռագիր մատյանների և հնատիպ գրքերի նկարագրությունը՝ հավելված 4, Մեղրիի Ս. Հովհաննես վանքից հայտնաբերված կտավի նկարագրությունը՝ հավելված 5, Եղվարդի Ս. Աստվածածին եկեղեցու հարակից տարածքից հայտնաբերված մարդաբանական նյութի ռադիոածխածնային անալիզի արդյունքները՝ հավելված 6, Սյունիքի ուշ միջնադարյան եկեղեցիների անվանացանկը ըստ քանակների՝ հավելված 7, ՀՀ Պետական ցուցակներում գրանցված ուշմիջնադարյան հուշարձանների ցանկը ըստ տեսակների՝ հավելված 8, Եղվարդի եկեղեցուց հայտնաբերված ուշ միջնադարին բնորոշ խեցեղենի տիպաբանական դասակարգման աղյուսակներ՝ հավելված 9):

Նախաբանում ներկայացված է աշխատանքի համառոտ բնութագիրը, թեմայի արդիականությունը, ուսումնասիրման առարկան, նպատակը և խնդիրները, ատենախոսության ժամանակագրական (XV-XVIII դդ.) և աշխարհագրական (ՀՀ

Սյունիքի մարզ) սահմանները, հետազոտության մեթոդաբանությունը, սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը, աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը:

Առաջին գլուխը՝ ուսումնասիրվող տարածաշրջանի պատմաշխարհագրական ակնարկ է: Հեղինակը դիտարկում է տարածաշրջանի մասին մատենագրական տեղեկությունները, ներկայացնում է տեղանունների ստուգաբանության վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետները: Բնական է՝ այս պատմաշխարհագրական ակնարկում հիմնական տեղը հատկացվում է ուշ միջնադարյան իրողությունների նկարագրությանը: Հեղինակը դիտարկում է ոչ միայն այդ փոթորկահույզ ժամանակաշրջանի հիմնական պատմական իրադարձությունները, այլև սկզբնաղբյուրների հիման վրա ներկայացնում է տարածաշրջանի հիմնական ճանապարհները:

Երկրորդ գլխում ներկայացվում են Սյունիքի ուշ միջնադարյան հուշարձանների պեղումները: Առաջին ենթագլուխը նվիրված է պաշտամունքային հուշարձանների (եկեղեցիների, վանքերի անապատների) պեղումները: Մասնավորապես ներկայացված են Եղվարդի Ս.Աստվածածին, Շիկահողի Ս. Ստեփանոս, Սրաշենի Ս. Հռիփսիմե, Տեղի Ս. Գևորգ, եկեղեցիները, Տանձատարափի անապատը, Մեղրիի Ս. Հովհաննես վանքը: Հեղինակը մանրամասն ներկայացնում է պեղումների ընթացքը, հուշարձանների ճարտարապետությունը, շերտագրությունը: Հեղինակը իրավացիորեն դիտարկում է եկեղեցաշինության աշխուժացումը ժամմանակաշրջանի ընդհանուր քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացների համատեքստում: Հեղինակը ներկայացնում է եկեղեցական կառույցների տիպաբանությունըԵրկրորդ ենթագլուխը նվիրված է աշխարհիկ կառույցների պեղումներին: Մասնավորապես ներկայացված են Մելիք Օհան Հուսեինյանի ապարանքի պեղումները: Հատկանշական է, որ այս համալիրը հեղինակի կողմից ներկայացվում և նկարագրվում է ընդհանուր Հին Գորիսի համատեքստում: Հեղինակը ներկայացնում է նաև քարանձավային կառույցները, դրանց ճարտարապետությունը և հատակագծային առանձնահատկությունները: Գլխի երրորդ և չորրորդ ենթագլուխները նվիրված են տնտեսական հորերին և օջախներին: Հեղինակը տիպաբանում է դրանք:

Ատենախոսության երրորդ գլուխում նկարագրվում են նորահայտ կոթողային հուշարձանները. խաչքարերը և տապանաքարերը: Վերջին տարիների պեղումների շնորհիվ Սյունիքի վիմագիր արձանագրությունների կորպուսը զգալիորեն համալրվեց: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ կոթողային հուշարձանների դասադասումը և տիպաբանումը թույլ է տալիս ճշտել տվյալ հուշարձանի ժամանակագրությունը և շինարարական փուլերը:

Աշխատանքի չորրորդ գլուխը նվիրված է նյութական մշակույթին: Առանձին ենթագլուխները նվիրված են խեցեղենի, մետաղական իրերի, քարե գործիքների, ոսկրյա և ապակյա իրերի նկարագրությանը: Խեցեղենի համատեքստում առանձնահատուկ նշվում են Մեղրիում հայտնաբերված հախճապակյա իրերը: Հեղինակն իրավացիորեն դրանց առկայությունը կապում է իրանական աշխարհի հետ կապերի հետ: Մետաղական իրերը ներկայացված են զենքի տեսակներով, լուսավորության միջոցներով, սպասքով, այդ թվում նաև արձանագիր նմուշներով: Հետաքրքիր է երաժշտական գործիքների ներկայացումը:

Եզրակացությունների բաժնում ամփոփված է ողջ աշխատության արդյունքը և դրա հիման վրա կատարված եզրահանգումները:

Ներկայացված աշխատանքն ամփոփում է հեղինակի բազմամյա քրտնաջան աշխատանքը Սյունիքում: Ատենախոսությունում հմտորեն համադրվում են մատենագրական, վիմագրագիտական, արխիվային և հնագիտական տվյալները: Արդյունքում ներկայացված է մի ամփոփ աշխատանք, որտեղ վերակազմվում է ուշ միջնադարյան Սյունիքի կյանքը. քաղաքական իրադարձությունները, սոցիալ-տնտեսական իրավիճակը, մշակույթը: Աշխատանքում տեղ գտած հիմնական դրույթներն ու թեզերը քննարկվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում և ներկայացվել ՀՀ ԲՈԿ կողմից երաշխավորված պարբերականներում հրատարակված 12 հոդվածներում:

Ատենախոսության շարադրանքը կուռ է և փոխկապակցված: Շարադրված է պարզ և հասկանալի լեզվով, գեղեցիկ մայրենիով: Հեղինակի եզրակացությունները հավաստի են և հիմնավորված, համապատասխանում են նախաբանում ներկայացված խնդիրներին: Հավելվածներում ներկայացված քարտեզները, լուսանկարները և չափագրությունները ամբողջովին լուսաբանում են աշխատանքի բովանդակությունը: Սեղմագրի բովանդակությունը ամբողջովին արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Միևնույն ժամանակ, պետք է նշել մի շարք ցանկություններ, որոնք օգտաշահ կլինեն հետագայում աշխատության մենագրային տարբերակը պատրաստելիս:

Ա. Որոշ լուսանկարներում բացակայում է մասշտաբը:

Բ. Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակն օգտագործեր Ստեփանոս Օրբելյանի փարիզյան և մոսկովյան (1859, 1860 թթ.) հրատարակությունները, մասնավորապես փարիզյան հրատարակության Կ. Շահնազարյանի առաջաբանը:

Գ. Ցանկալի կլիներ տեղանունները ստուգաբանելիս օգտագործել Հ. Կարագյոզյանի մենագրությունը:

Դ. Օգտաշահ կլիներ որպես զուգահեռ դիտարկել Սյունիքի արևելյան գավառներում (Քաշաթաղի շրջան) (Ա. Հակոբյան, Ա. Ղուլյան, Գ. Սարգսյան, Հ. Սիմոնյան և այլք) և Նախիջևանում (Ա. Այվազյան) հետազոտությունների արդյունքները:

Վերոնշյալ հանգմանքները բնավ չեն ստվերում հեղինակի կատարած հսկայածավալ, խորը գիտական աշխատանքը: Թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է գիտական աստիճանաշնորհման անվանացանկի Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությանը և հեղինակը լիովին արժանի է հայցած պատմական գիտությունների թեկնածուի կոչման, ինչի համար ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնը որպես առաջատար կազմակերպություն միջնորդում է մասնագիտական հանձնաժողովին:

ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Հ. Գ. Ավետիսյան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Գ. Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝ ԵՊՀ գիտքարտուղար՝

բ.գ.թ., դոց. Մ. Հովհաննիսյան

03. 07. 25 թ.